ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄԳՍ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հունվարի 17-ին կնքված N <<ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄԳՍ-19/1>> պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Անհրաժեշտություն է առաջացել ավելացնել պայմանագրի ընդհանուր գինը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող վճարման ժամանակացույցի մեջ կատարվել է համապատասխան ավելացում:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե:***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

17.01.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄԳՍ-19/1 պայմանագրի

Ք. Երևան <<16> դեկտեմբերի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հարությունյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 17.01.2019 թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՄԳՍ-19/1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի 4.1 կետով սահմանված պայմանագրի ընդհանուր գինն ավելացնել 200000 ՀՀ դրամով և հաստատել 2200000 (Երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

1.2 Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի Հավելված № 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ
Ք.Երևան Մամիկոնյանց 46/5	Վայոց Ձորի մարզ, գ. Մալիշկա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 90001000834	Հ/Հ 1930012214750100
ՀՎՀՀ 02631263	ՀՎՀՀ 01834959
	էլ. հասցեն՝ magasinvest@gmail.com
	հեռ. (010)289947
(ստորագրություն)	(ստորագրություն)